



ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0669/02/12թ.  
Նախագահող՝ դատավոր Հ.Գրիգորյան  
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան  
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0669/02/12թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

23-ին ապրիլի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով՝

նախագահությամբ՝ դատավոր Ա.Հայրապետյանի  
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի  
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Յուրի Լևոնի Օհանջանյանի ընդդեմ Լենա Պողոսի Պետրոսյանի և ԼՂՀ ԱՆ Մարտակերտի նոտարական տարածքի նոտարի՝ կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 27-ի որոշման դեմ հայցվորի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Համաձայն 2008թ. նոյեմբերի 20-ին կազմված և նոտարական կարգով վավերացված կտակի՝ Լևոն Հարությունի Օհանջանյանը, Մարտակերտ քաղաքի Ն.Դանիելյան փողոցի թիվ 11 հասցեում իրեն պատկանող բնակելի տան ձախ մասի երկու սենյակը և խոհանոցն իր նկուղներով կտակել է կնոջը՝ Լենա Պողոսի Պետրոսյանին, իսկ աջ մասի երեք սենյակն իր նկուղներով՝ որդուն՝ Յուրի Լևոնի Օհանջանյանին, տնամերձ հողամասը բաշխելով հավասարաչափ:

Համաձայն 2009թ. նոյեմբերի 30-ին կազմված և նոտարական կարգով վավերացված կտակի՝ Լևոն Օհանջանյանը վերոնշյալ բնակելի տունը և հողամասը կտակել է կնոջը՝ Լենա Պետրոսյանին:

Հայցվոր Յուրի Լևոնի Օհանջանյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը 2012թ. մայիսի 2-ին դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ Դատարան/ ընդդեմ Լենա Պոդոսի Պետրոսյանի և ԼՂՀ Մարտակերտի նոտարական տարածքի նոտարի՝ Լևոն Օհանջանյանի անունից 2009թ. նոյեմբերի 30-ին կազմված և նոտարական կարգով վավերացված կտակն անվավեր ճանաչելու մասին խնդրանքով:

Դատարանի 2012թ. հուլիսի 13-ի վճռով հայցը մերժվել է:

Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2012թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ Դատարանի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Դատարանի 2013թ. դեկտեմբերի 19-ի վճռով հայցը բավարարվել է:

Պատասխանող Լ.Պետրոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 27-ի որոշմամբ Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է ու Յուրի Օհանջանյանի հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

Գերագույն դատարանի 2014թ. ապրիլի 10-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ՝ նաև Օրենսգրք/ 49-րդ հոդվածի պահանջները, ճիշտ չի մեկնաբանել ու չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառման ենթակա 1205-րդ և 1211-րդ հոդվածների պահանջները, խախտել է Օրենսգրքի 229-րդ հոդվածի դրույթները, անհիմն հղում է կատարել նույն Օրենսգրքի 44-րդ հոդվածի պահանջներին և սխալ եզրահանգման արդյունքում բեկանել է Դատարանի ըստ էության ճիշտ ու պատճառաբանված վճիռը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

1. Ի խախտումն Օրենսգրքի 43-րդ, 44-րդ և 49-րդ հոդվածների պահանջների, Վերաքննիչ դատարանը դատական ակտի հիմքում դրել է որևէ ապացույցով չստուգված և չհետազոտված վերաքննիչ բողոքի փաստարկները, որոնք ապացույցներ հանդիսանալ չեն կարող, դրանով իսկ դատական ակտը վերանայելով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից դուրս:

2. ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1203-րդ և 1211-րդ հոդվածների սխալ մեկնաբանության արդյունքում, Վերաքննիչ դատարանը 2008թ. նոյեմբերի 20-ին և

2009թ. նոյեմբերի 30-ին կազմված կտակները Լևոն Օհանջանյանի կողմից ստորագրված լինելու փաստն անհիմն կերպով ապացուցված է համարել:

3. Վերաքննիչ դատարանը սխալ է հղում կատարել ԼՂՀ արդարադատության նախարարի 2005թ. հոկտեմբերի 5-ի թիվ 203 հրամանով հաստատված հրահանգի 30-րդ կետի պահանջները պետնոտարի կողմից կատարելուն, որով հաստատվում է ոչ թե Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները, այլ ընդհակառակը՝ հայցի հիմնավոր լինելու փաստարկները:

Ըստ բողոքաբերի՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտմամբ կայացված բողոքարկվող դատական ակտը հանգեցրել է գործի սխալ լուծմանը, ուստի բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 27-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2013թ. դեկտեմբերի 19-ի վճռին:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Համաձայն գործի նյութերի՝ պատասխանող Լենա Պետրոսյանը 1991թ. ամուսնացել է Լևոն Օհանջանյանի հետ և նրանց ամուսնությունը 1992թ. գրանցվել է ՔԿԱԳ բաժնում:

2. 2008թ. նոյեմբերի 20-ին կազմված կտակով Լևոն Օհանջանյանը Մարտակերտ քաղաքի Ն.Դանիելյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող և սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տունը և հողամասը կտակել է կնոջը՝ Լենա Պետրոսյանին և որդուն՝ Յուրի Օհանջանյանին:

3. 2009թ. նոյեմբերի 30-ին կազմված կտակով Լևոն Օհանջանյանը վերոնշյալ բնակելի տունը և տնամերձ հողամասը կտակել է կնոջը՝ Լենա Պետրոսյանին:

4. Երկու կտակներն էլ վավերացվել են Մարտակերտի նոտարական տարածքի պետնոտար Ն.Պետրոսյանի կողմից, և պարունակում են նոտարի կողմից կատարված գրառում. ,Վավերացվել է Մարտակերտ քաղաքի Նորայր Դանիելյանի փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տանը:

5. Համաձայն ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից 2010թ. օգոստոսի 3-ին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 108495 վկայականի՝ Մարտակերտ քաղաքի Ն.Դանիելյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տունն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Լևոն Օհանջանյանին և Լենա Պետրոսյանին:

6. Համաձայն ԱԲ N 012243 մահվան վկայականի՝ Լևոն Օհանջանյանը մահացել է 2010թ. նոյեմբերի 19-ին:

7. Համաձայն դատաձեռագրաբանական փորձաքննության 2013թ. մայիսի 3-ի Հմ՝ 4101.13 եզրակացության՝ փորձաքննության ներկայացված՝ 2008թ. նոյեմբերի 20-ին և 2009թ. նոյեմբերի 30-ին կազմված կտակներում կտակարար բառի դիմաց առկա ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

8. Համաձայն դատաձեռագրաբանական փորձաքննության 2013թ. նոյեմբերի 7-ի Հմ՝ 24501.13 եզրակացության՝ 2008թ. նոյեմբերի 20-ին և 2009թ. նոյեմբերի 30-ին կազմված կտակներում կտակարար բառի դիմաց առկա ստորագրությունները պարզել՝ հանգուցյալ Լևոն Օհանջանյանի կողմից են կատարվել թե ոչ՝ հնարավոր չէ՝ ներկայացված նմուշների և հետազոտելի ստորագրությունների անհամատեղելիության պատճառով:

#### **4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն բողոքով Գերագույն դատարանի առջև բարձրացված հարցերը վերաբերում են ապացույցների հասկացությանը և տեսակներին, կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու կանոններին և ապացույցների գնահատմանը, կտակի կազմման կանոններին և դրա անվավերության ճանաչման հիմքերին:

Ապացույցների հասկացությունը և տեսակները, կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելը սահմանված են Օրենսգրքի 43-րդ և 44-րդ հոդվածներով:

Համաձայն Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է Դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Օրենքի այս պահանջը նշանակում է, որ եթե գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա Դատարանը ճիշտ չի որոշում ապացուցման առարկան կազմող իրավաբանական փաստերի շրջանակը և լրիվ չի պարզում դրանք, ապա Դատարանի վճիռը չի բխի գործի նյութերից, հետևաբար՝ չի կարող լինել օրինական ու հիմնավորված:

Գործի նյութերից նկատելի է, որ հայցադիմումին կից այլ փաստաթղթերի թվում Դատարանին են ներկայացվել 2008թ. նոյեմբերի 20-ին և 2009թ. նոյեմբերի 30-ին Լևոն Օհանջանյանի անունից գրված և նրա կողմից ստորագրված ու նոտարական կարգով վավերացված կտակների լուսապատճենները, որոնք Դատարանի կողմից ընդհանրապես չեն հետազոտվել և ստուգվել՝ բնօրինակի հետ ճիշտ լինելու տեսանկյունից: Այս պահանջը բխում է Օրենսգրքի նորմերից, որի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրավոր փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով... Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքում, եթե գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստերով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դատարանի պահանջով:

Այդքանով հանդերձ, հայցվոր կողմի ներկայացուցիչը միջնորդել է գործով նշանակել դատաձեռագրաբանական փորձաքննություն, պարզելու համար, թե արդյո՞ք 2008թ. նոյեմբերի 20-ի և 2009թ. նոյեմբերի 30-ի կտակների տակ դրված ստորագրությունները կատարված են հանգուցյալ Լևոն Օհանջանյանի կողմից թե՛ ոչ: Մակայն, ի խախտումն Օրենսգրքի 57-րդ հոդվածի պահանջների, Դատարանի կողմից փորձագետի առջև հարցը դրվել է հետևյալ բովանդակությամբ. ,2008թ. նոյեմբերի 20-ի և 2009թ. նոյեմբերի 30-ի կտակներում առկա ստորագրությունները միևնույն անձի կողմից են կատարվել թե՛ ոչ: Եզրակացություն տալու համար փորձագետին տրամադրվել են հետազոտելի կտակների բնօրինակները և նոտարական գրանցումների 2008թ. և 2009թ. սեղանամատյանները, որտեղ գրանցված են հետազոտելի կտակները: Լրացուցիչ դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելուց հետո, Դատարանը, անհասկանալի պատճառով, հետազոտելի կտակների բնօրինակները և նոտարական գրանցումների սեղանամատյանները փորձագետին չի տրամադրել, որի արդյունքում Դատարանի առաջադրված հարցին՝ թե 2 կտակներում առկա ստորագրությունները Լևոն Օհանջանյանի կողմից են կատարվել թե՛ ոչ, փորձագետը չի կարողացել պատասխանել՝ ներկայացված նմուշների և հետազոտելի ստորագրությունների անհամատեղելիության պատճառով:

Վերոնշյալ հանգամանքների պայմաններում գործով ոչ միայն կրկնակի դատաձեռագրաբանական փորձաքննություն չի նշանակվել, այլև հետազոտելի կտակների բնօրինակները և նոտարական գրանցումների սեղանամատյանները Դատարանի նախաձեռնությամբ հանձնվել են ԼՂՀ ԱՆ Մարտակերտի նոտարական տարածքի պետնոտարի օգնականին: Այնինչ, համաձայն Օրենսգրքի 51-րդ հոդվածի՝ գործում գտնվող փաստաթղթերի բնօրինակները, դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ, վերադարձվում են դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այս դեպքում գործում թողնվում է փաստաթղթի բնօրինակի՝ Դատարանի կնիքով վավերացված պատճենը կամ քաղվածքը: Գործի հանգամանքները բազմակողմանի և լրիվ բացահայտելու առումով անուշադրության է մատնվել պատասխանող Լ.Պետրոսյանի կողմից Դատարանին ներկայացված՝ 2009թ. փետրվարի 23-ին նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի լուսապատճենը, որում առկա է Լ.Օհանջանյանի ստորագրությունը:

Գերագույն դատարանը փաստում է, որ, չնայած սույն գործով ԼՂՀ ԱՆ Մարտակերտի նոտարական տարածքի նոտար Ն.Պետրոսյանը հանդիսանում է պատասխանող, սակայն գործում չկա որևէ ապացույց՝ գործի քննության վերաբերյալ նոտարին պատշաճ ծանուցելու վերաբերյալ: Դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայման է: Փաստորեն, սույն գործի քննությունը միշտ էլ կատարվել է պետնոտարի բացակայությամբ, որի ցուցմունքները, անկասկած, կարևոր նշանակություն ունեն վեճի առարկայի՝ կտակի ձևակերպման և վավերացման հանգամանքները պարզելու կապակցությամբ: Այդ համատեքստում, Վերաքննիչ դատարանի կողմից Մարտակերտի նոտարական տարածքի պետնոտարի գործողություններին իրավական գնահատական տալը, Գերագույն դատարանը համարում է վաղաժամ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1192-րդ հոդվածի 1-ին մասի՝ կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը:

Համաձայն նույն օրենսգրքի 1202-րդ հոդվածի 1-ին մասի՝ կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը, ընդ որում նա պարտավոր չէ նշել կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու պատճառները:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ կտակը կարող է անվավեր ճանաչվել այն հիմքերով, որոնք նախատեսված են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ժառանգման հարաբերությունները կարգավորող հատուկ նորմերով և գործարքի անվավերության մասին ընդհանուր նորմերով:

Այդ իմաստով, Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ,փորձաքննությունների եզրակացություններով վիճելի է մնացել միևնույն անձի կողմից ստորագրված 2 կտակները Լևոն Օհանջանյանի կողմից կազմված և ստորագրված լինելու փաստը, իսկ պատասխանող կողմը դատարանին չի կարողացել ապացուցել իր վկայակոչած փաստերը: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, կասկածի տակ չդնելով վեճի առարկա կտակի տակ Լ.Օհանջանյանի ստորագրության իսկությունը, պատասխանող կողմի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում հայցի մերժման հիմքում նշել է նաև այն հանգամանքը, որ ,հայցվորի կողմից երկար տարիներ ԼՂՀ սահմաններից դուրս բնակվելու, հորը չտեսակցելու, նրա նկատմամբ հոգ չտանելու, ֆինանսական օգնություն չցուցաբերելու հանգամանքներով պայմանավորված, միանգամայն իրական ու տրամաբանական է նրա հոր՝ Լևոն Օհանջանյանի կամքի փոփոխությունը հօգուտ իր նկատմամբ հոգ տանող անձի, ինչը նա արտահայտել է 2-րդ կտակի կազմմամբ:

Գերագույն դատարանը պատճառաբանված չի համարում ստորադաս դատարանների նման եզրահանգումները և հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքի այն պնդումը, որ Վերաքննիչ դատարանը, առանց որևէ պատճառաբանության, վերաքննիչ բողոքի փաստարկները դրել է դատական ակտի հիմքում: Այդ այն դեպքում, երբ պատասխանող կողմը, վերաքննիչ բողոքում որևէ ապացույցով չի հիմնավորել իր իսկ կողմից վկայակոչված փաստարկները: Համաձայն Օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

Գերագույն դատարանը անհրաժեշտ է համարում նշել, որ սույն գործի նյութերով վեճի առարկա կտակը Լ.Օհանջանյանի կողմից ստորագրելու փաստը հավաստող որևէ անառարկելի և անվիճելի ապացույց ձեռք չի բերվել, և այդ առումով, Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ 2008թ. նոյեմբերի 20-ի կտակի տակ առկա Լ.Օհանջանյանի ստորագրության իսկությունը հայցվորի կողմից ընդունելու

փաստը վկայում է, որ 2009թ. նոյեմբերի 30-ի կտակը նույնպես ստորագրվել է Լ.Օհանջանյանի կողմից: Մինչդեռ, քաղաքացիական գործերը քննելիս դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն ստուգվել, հետազոտվել և գնահատվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական տվյալներն ու հանգամանքները, և Օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 49-րդ, 50-րդ, 229-րդ հոդվածների պահանջների խախտման արդյունքում կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական որոշումներ:

Միայն նոր դատաքննության ընթացքում վերոնշյալ թերությունները և խախտումները վերացնելու պարագայում հնարավոր կլինի գործով ընդունել այս կամ այն օրինական և հիմնավորված որոշումը:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված դատավարական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ Օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը 'Դատարան' նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Յուրի Օհանջանյանի ներկայացուցիչ Վլադիմիր Հայրապետյանի վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 27-ի որոշումը բեկանել և քաղաքացիական գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**